39. ԹԱԳԱՎՈՐԻ ՋԱՆԱՎԱՐ ՓՆՍԵՔ

Կէղի, չէղի թագաւորմ կէղի։ Իրեք տղա, իրեք ախչիկ կէղի թագաւորին։

Թագաւորի խալիվորցած ժամանակ կղանչա ուր տղեքներուն ուր մոտ կբերի, օսիաթ կէնա, կըսա.

— Ո՛ն օր կիգա հ՝առեճ իմ ախչիկներ կուզա, էնոր կիտաք, կտանա։ Մեկ էլ, ֆլան (այսինչ) հ՝օգի բռնավոր չթորկեք։

Թագաւոր կմեռի։ Մեկ քանի օր կանցնի, ըն մեկ օր գելմ կիգա, կըսա.

— Ծեր ճոչ քուր ընձի տվեք։

Էրկու ճոչ ախպեր կըսին թե՝ «Էդի գել ա, ընչի՞ մեր քուր տանք էտոր»։ Պզտիկն կըսա։

— Իմ խոր օսիաթն ա, ես կիտամ։

Պզտիկ ախպեր քուրը գիլուն տվեց։ Գել տարավ թագավորի ախչիկ։

Էն մեկել օր արջն էկավ։ Էկավ թագավորի տուն, ըսաց.

— Ծեր միջնեկ քուր տվեք ընձի։

Թագավորի էրկու ճոչ տղեքներ ըսեցին թե՝ «Էգի ջանավար ա, մեր քուր չիտանք էտոր»։ Պզտիկ ախպեր ըսաց.

— Ես իմ խոր օսիաթն չըմ կորցու։

Քուր տվեց արջուն։ Արջն տարավ թագավորի միջնեկ ախչիկ։

Էն մեկել օր արծիվմ էկավ թագավորի տուն, ըսաց.

— Ծեր քուր տվեք ընձի։

Թագավորի էրկու ճոչ տղեքներ ըսեցին թե՝ «էդի խավք ա, մենք մեր քուր չի տանք էդ խավքուն»։

Պղտիկն ըսաց.— Իմ խոր օսիաթ չըմ կորցու։

Քուր տվեց արծվուն։ Արծիվ տարավ թագավորի պղտիկ ախչիկ։

Թագավորի էրկու ճոչ տղեն ինատ էնեցին (քեն ըրին) ուրանց պղտիկ ախպոր։

Գացին էն հ՝օդեն օր խեր ըսաց թե՝ «Դուռ մ՝բանեք», էն հ՝օդի դուռ բացին, բռնավոր մարթ դուս հ՝ելավ։ Քամեղեն էր, առավ թագավորի պղտիկ խարսը, գնաց։

Թագավորի պղտիկ տղեն իրիկուն տուն էկավ, տեսավ օր ուր կնիկ տուն չէր։

Խարցուց.— Հո՞ւր է իմ կնիկ։

Ըսեցին ախպրտիք.— Մեր տան բռնավոր Քամեղեն մարթ տարավ քու կնիկ։

Լուսուն թագավորի պղտիկ տղեն հ՝ելավ ճամբախ գնաց։ Շատ ու քիչ աստված գինա, մե սարի մի հանդիպավ։ Էդ սարի մեջ խորոտ տուն մի կար։ Դռան հ՝առեճ նստավ, խաց կերավ, տեսավ օր ճոչ քուրը դուռ բացեց, դուս հ՝ելավ։

Քուր ուրախցավ.— Բարով իս էկե, ախպեր։

Ախպերն ըսաց.— Բարու մեջ մնաս, քու էրկու ճոչ ախպեր մեր խոր բռնավորին դուռ բացած, բռնավոր հ՝ելե առե իմ կնիկ, գացե։

Քուր, զախպեր տուն տարավ, խաց կերցուց, տարավ պախեց։

Իրիկուն գելն էկավ, ուր փոսթ վերուց, էղավ մարթ, ախչկա մոտ նստավ։ Ախչկնից խարցուց.

— Էսօր դու ուրախ իս։

Ախչիկ ըսաց.— Ես հ՝ըմըն օր լէ ուրախ եմ։

Գելն ըսաց.— Չէ, էս ավուր պես ուրախ չիր։ Կէղի՞ քու ախպըրտոց մոտեն մարթ իկե դաս։

Ախչիկն ըսաց.— Որ իմ ախպրտիք իգան դաս, ի՞նչ կէնիս։

Գելն ըսաց.— Էրկու ճոչ ախպերն էղին, ուրանց ճոչ պրտուճ անկաջ կթորկեմ, թե պղտիկն էղի, վեր իմ դլխուն տեխ կա։

Ըսաց.— Վալա, իմ պղտիկ ախպերն ա էկե։

Ըսաց.— Ապա հ՝որի՞ իս պախե։

Ըսաց.— Քու ապովն իմ պախե։ Տըսուց իգեր, չճանչներ, իմ ախպոր կվնասեր։

Ըսաց.— Կղանչա թըխ իգա։

Հ'ելավ գախպեր բերեց։ Ուրախցան վիրար։

Գելն խարցուց, ըսաց.— Ի՞նչ բան ունիս ըստեղրանք։

Ըսաց.— Քամեղեն մարթ իմ խոր բռնավորն էր, իմ ախպըրտիք հ'օդի դուռ բացած ին, թորկած ին։ Հ'ելեր, առեր իմ կնիկ, գացեր ա. կէրթամ իմ կնկան ետեն։

Ըսաց.— Էրկու ավուր ճամբախ դեն Արջու սինորն ա։

Խըտ իրար խաց կերան, հ'ելան պտուկան։ Լուսուն հ'ելավ, դել տարավ ուր սինոր հ'ընցուց։

Տղեն օրմ էլ գնաց Արջու խողի մեջ տան մի ռաստ էկավ։ Դուռ նստավ, տեսավ ուր քուր դուս հ'ելավ։

Ախչիկն օր տեսավ ուր ախպեր, ջատ ուրախցավ, վերուց ախպեր տուն տարավ։ Խաց բերեց ախպեր կերավ։ Զախպեր տարավ, խորոտ պախեց։

Իրիկուն արջն էլ էկավ, ըսաց.— Թագավորի ախչիկ, իսանի խոտ կուգա մըր տնեն։

— Է՛,— ըսաց,— ես իսանի ախչիկ եմ, ընձնե ի խոտ կուգա։

— Չէ՛,— ըսաց,— քու խոտ էլ չի գա, դրուստն ասա՛, թե քու էրկու ճոչ ախպերն են էկած, ուրանց ճոչ կտոր ականջ կթորկիմ, թե պղտիկն ա, իմ գլխու վրեն տեխ կա։

Ախչիկն ըսաց.— Իմ պզտիկ ախպերն ա։

Ըսաց.— Ընչի՞ ես պախե, դե հ'ելի բե։

Ախչիկ հ'ելավ, ախպոր պախած դիից բերեց։ Ուրախցան իրարու վրեն։ Խաց բերեցին, կերան։ Արջն խարցուց.

— Ախպե՛ր, ի՞նչ բան ունիս ըս տերանք։

Ըսաց.— Մեր խոր Քամեղեն բռնավոր մը կար, իմ ախպըրտիք բռնավորին դուռ բացած, Քամեղեն մարթ իմ կնիկ տարեր ա, էկեր իմ, կէրթամ ետնեն։

Արջն ըսաց.— Էրկու ավուր ճամբախ դեն կընգի Արծվու խող, Քամեղեն մարթու սինոր ես չըմ գինա։

Իրիկուն պառկան։ Լուսուն հ'ելան, Արջն տարավ էրկու ավուր ճամբախ ուր սինոր հ'ընցուց։

Թագավորի տղեն գնաց, մի օր Արծվու տան հ'առեճ քարի վրեն նստավ։ Տեսավ ուր քուր տնից հ'ելավ։ Քուր ախպոր տեսավ, ջատ ուրախցավ։ Տարավ տուն, խաց կերցրեց, տարավ ախպոր խորոտ պախեց։

Արծիվն իրիկուն կզժման (ձայնով) էկավ, տուն մտավ։ Ախչկնին խարցուց, ըսաց.

— Մարթու խոտ կուգա։

Ախչիկ ըսաց.— Մարթ ես եմ, ուրիշ մարթ չի կա, խոտ իգա։

Ըսաց.— Օգորթ ըսա՛, թե քու ճոչ ախպրտիքն են, կվերցում էրկնքի էրեսից վեր կթորկիմ, ուրանց մեծ կտոր ուրանց անկաշ մնա։ Թե պզտիկն ա, իմ գլխու վրեն տեխ կա։

Ախչիկն ըսաց.— Էտման կզժման օր ղու էկար, իմ ախպեր պախտուկ չէղեր, ախու կմեռեր։

Արծիվն ըսաց.— Հ'ելի, էստեխ բե։

Ախչիկն հ'ելավ, ախպոր պախած դիից բերեց։

Արծիվն օր թագավորի պզտիկ տղեն տեսավ, շատ ուրախացավ։ Խաց բերեցին, կերան։ Էրկ օր տուն պախեց։

Ըսաց.— Ախպեր, դո՞ր կէրթաս։

Ըսաց.— Մեր խոր Քամեղեն բռնավորմ կեր, իմ ախպրտիք բռնավորի հ'օդի դուռ բացած, զբռնավոր դուս թորկած, բռնավոր իմ կնիկ տարե, եդեն կէրթամ։

Ըսաց.— Դու չրկենաս էրթաս բերես քու կնիկ։ Դու օր յոթն օր ճամբախ էրթաս, էնի մեկ սաաթվան մեջ կիգա, քըզի կրռնա։ Դու էնա վրեն չկենաս։ Մ'էրթա՛, ընչի չկա՞ կնիկ։

Ըսաց.— Կէրթամ։

Արծիվն էտոր տարավ, ուր սինոր հ'ընցուց, ըսաց.

— Ահա՛, էսա քըզի Քամեղեն մարթու խող։ Օր օտացմ մե օսկի տան, մե օտ չիմ թալի Քամեղեն մարթու խող։

Թագավորի տղեն գնաց։ Իրեք օր օր գնաց, տան մի դռան հ'առեճ նստավ։ Տեսավ ուր կնիկ դուս հ'ելավ։

— Մարթ,— ըսաց,— զուր էկար, դու ընձի էտոր ձեռքեն չկենաս ազատես։

Տղեն առավ զկնիկ, ճամբախ ընկավ։ Էրկ օր ճամբա էկավ. Քամեղեն մարդ ուր տուն էկավ։ Տեսավ ուր կնիկ տուն չէր։

Ձիուն ըսաց.— Ուտենք, խմենք, սորա՞ (վերջ) ճամբախ հ'ելինք, թե հրմա հ'ելինք ճամբախ։

Ձին ըսաց.— Կե՛ր, խմա, ղինջացիր, գելինք կէրթանք բերենք։

Մարթ ուր կերակուր շինեց, խացն կերավ, ձին քաշեց։ Հ'ելավ խեծավ։ Ձին ըսաց.

— Մե կղամչի (մտրակ) ընձի զարկես, կխասուցեմ։

Մարթն կղամչին օր զարկեց ձիուն, սաաթվան մի ճամբախ

մացեր էր օր խասեր Արծվու խող։ Քամեղեն մարթ խասավ թագավորի տղին բռնեց, ղթաղավորի տղեն սպանեց, առավ ղկնիկ, ուր տուն գնաց։

Արծիվ հ'իմցավ օր սպաներ են, ուր խող տարավ թագավորի աղի ջանդակ (մարմին)։ Քուրն օր տեսավ ախպոր ջանդակ, լաց էնեց։

Ըսաց Արծիվն.— Մի իլա՜ր, ես էնոր կսախցում։

Արծիվն էդ խոսք ըսաց, հ'ելավ ու գնաց։ Շատ ու քիչ գնաց, անմահական ջուր բերեց, տղի բերան լցեց, աղի ջանի վրեն քսեց, տղեն սախցավ։

Արծիվն ըսաց.— Օր կէրթաս, էնոր ձին թավլեն կապուկ ա, չորս օտաց կայիդ (օղ) կա, եթե էնոր կայդեր արցկիր, ձին դուս քաշիր, էրկուսդ խեծեք, կաղատվիք։

Թագավորի տղեն հ'ելավ, գնաց, Քամեղեն մարթու տուն խասավ։ Հ'ելավ, մրտավ թավլեն, ձիու կայդերը մի ամբողջ օրմ անջախ կտրեց, ձին տուն քաշեց, կնկան կղանչեց, ինքն խեծավ, կնիկ ուր պառեկին առեց, կնկան ըսաց.

— Իմ պառեկ կղայիմ պռնի,— ու ձին քշեց։ Էկավ մի օրվան ճամբախ։

Քամեղեն մարթ տուն մտավ, տեսավ կնիկ տուն չէ, գնաց թավլեն իշկեց, ձին լէ թավլեն չէ։ «Վա՜խ» էնեց, խոքին փչեց։

Թագավորի տղեն առավ ուր կնիկ, էկավ տուն, թագավոր էղավ, զուր ախպրտիք սուրգուն խրկեց։

Էրկնուց իշավ իրեք խատ խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ անկաչ էնողին։